

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն : — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 դրուշ արծաթ : — Վեցամսեայն 50 . — Գաւառաց համար 115 դրուշ . — Վեցամսեայ 60 . — Ծանուցման տողը 5 դրուշ :



Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել : Ա. Արտոնատէր և Տնօրէն ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ Էսկի Զապթէյէ Ճաատէսի Նշան էՖ. Պէրպէրեանի Տպարանն : Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տրուիր :

40 ՓԱՐԱ

Հ Ա Ն Դ Ե Ս

ՓԱՐԱ 40

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային Տեսութիւն (Պարտաճանաչութիւն և Անկեղծութիւն) — Ազգային պարտհանդէս (ի նպատտ Դպրոցատէր Տիկնանց Ընկերութեան) — Դարձեալ Մայր եկեղեցի — Զմիւռնական գործեր — Պետրոս էՖ. Փափագեան — Բժշկի մը իս ատը ԻնՖլուէնցայի առթիւ — Ասկէ անկէ — Խօսուէ շունը — Փունջ — Տանկ մուհաքէմէսի — Տիկին բանդալուն (վիպասանութիւն) — Ծանուցմունք :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ

Ե Ի Ա Ն Կ Ե Ղ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Օրաթերք հրատարակեցին Ս. Ծընդեան տօնի առթիւ մեր Ազգային Պատրիարքարանի մէջ պաշտօնական ընդունելութեան նկարագրութիւնը, որմէ տեղեկացան ընթերցողը թէ ազգային պաշտօնական մարմինք մեծ մասամբ դժբաղդարօր փայլեր են իւրեանց բացակայութեամբ, և անշուշտ շատ աննպատ գաղափար մը կազմեցին, մանաւանդ երբ հասու եղան թէ միայն Երեմի Երեսփոխանք ներկայ էին, մինչդեռ մեր արդի Բաղ. ժողովը վեց ներկայացուցիչ ունէր. Կրօն. ժողովոյ կողմէ հաղիւ երկու եկեղեցական Հայրեր եկած էին, իսկ եկեղեցական դասէն երկու կամ երեք անձ : Այս բացակայութեանց՝ որ շատ

զգալի եղած է, ոմանք զանազան մեկնութիւններ կուտան, բայց ինչ որ ալ լինի ատոնց նշանակութիւնը, նոյն իսկ ազգային շահուց և արժանապատուութեան տեսակէտով բնաւ հաւանելի չեն :

Կը հակնանք և խիստ լաւ կ'ըմբռնենք թէ մեր ազգային արդի կացութիւն՝ վերաբերմամբ մեր ներքին գործոց՝ քաջալերական չէ, բայց անյաջողութեան ամեն պատճառ միայն Ս. Պատրիարքին վերագրելն արդարութեան գործ չէ :

Այդ ծանր պատասխանատուութիւն շատ լաւ կը պատշաճէր ն. Ամենապատուութեան, եթէ Ո. Պատրիարքըն բնաւ տրամագրութիւն ցոյց չտար մեր ներքին գործոց բարւոքման, և կամ, ինք լինէր խոչընդոտ և արգելքներ յարուցանող, խոստովանելի է զի ն. Ամենապատուութիւն պարտի ազգու և կորովալի ընթացք ունենալ, ցունց ու մղում տալ և ոգեւորութիւն ներշնչել :

Այս տեսակ կասկածներ միանգամ բնդ միշտ հերքելու հօրապէս կը ծառայէ մեր շատ յարգելի Բաղ. ժողովոյ այն բանախօսութիւնը, զորմէ խօսեցանք Մաղիկի նախորդ թուով հրատարակեալ մեր Ազգային Տեսութեամբ :

Երբ մեր վստահելի Բաղ. ժողովը անկեղծօրէն գոհունակութիւն կը յայտնէ յամենայն դէպս նկատմամբ Ս. Պատ-

րիարք Հօր բարեյօժարութեան և բարեացակամութեան, մեզ անկէ ամեն կասկած և անվստահութիւն ի բաց վանել մեր մտքէն, վստահ լինել մեր վարչութեան վրայ — որպէս է Բաղ. ժողովը՝ որ անօր գլխաւոր գործունեայ ճիւղը կը կազմէ — և դէթ ազգովին ընձեռել այն բարոյական աջակցութիւն, որ գործելու գլխաւոր ոյժը կը կազմէ, և այդ բան ամենահրաժեշտ է մանաւանդ արդի դժուարին պարագայից մէջ :

Զայս բացայայտ ճշմարտութիւն ըմբռնելու համար բաւական է որ մարդքիչ մ' ուշմութիւն, շրջահայեցութիւն, ուղղամտութիւն և ճշմարիտ աղագասիրութեան գէթ փոքր կայծ մ' ունենայ և տեսնէ թէ մեզ վիճակակից ազգեր ինչպէս կը վարուին ու ինչպէս կը յարգեն իւրեանց ազգային իշխանութիւնը :

Վստահելի անձինք կը հաւաստեն թէ Յոյն բարձրաստիճան անձինք պաշտօնական համազգեստով կ'երթան ի Պատրիարքարան, երբ հարկ լինի ներկայանալ իւրեանց Ամեն. Ս. Պատրիարքին :

Այս ձեւակերպութիւն նպատակ ունի պարզապէս ազգային — եկեղեցական իշխանութիւնն յաչս ժողովրդեան պատկառելի ընծայելու, որ կարելոր պէտք մ' է :

Կը համակրինք սոյն գաղափարին, վստահ երբ օրինակն բարձրէն դայ ազգեցիկ կը լինի :

Հայկական առածը կ'ըսէ՝ Խաչը ուրիշ է զորսոր ընողը :

Եթէ կուզենք և կը փափագինք— քննչպէս որ բնական է զի ուզենք և փափագինք—որպէս զի մեր Ազգային Իշխանութիւն լինի ազգեցիկ և ակնածելի նոյն իսկ յաջ օտարաց , պարտինք նախ մենք ընծայել պարտապատշաճ յարգանքն ու մեծարանքն նմա , որ մերն է , մենէ կ'առնու իւր ծագումը , մենէ կը բղխի իւր օրինաւոր իշխանութիւն և մենք զայդ ունինք միայն :

Եւ այս բան պարտաճանաչութիւն է(1):

Եթէ կը կարծեն ոմանք թէ պաշտօնական այցելութիւնք սահմանեալ են միայն պարզապէս քաղաքավարական պարտաւորութիւն մը կատարելու , այնպիսիք իհարկէ շատ սխալ գաղափար մը կը դաւանին :

Պաշտօնական այցելութիւնք միջոցներ են Ազգին և նորա Գլխոյն՝ Ս. Պատրիարք Հօր միջեւ յարաբերութիւնները մշակեալ պահելու և ընդհանուր Ազգին անմեղ իղձերն և պէտքերը հանդիսապէս հաղորդելու ն. Սրբազնութեան , որպէս զի մօտէն գիտակցութիւն և գաղափար ունենայ , լուսաբանուին իւր կարծիք և յամենայն դէպս ունենայ կորովի ընթացք :

Կը հետեւի թէ պաշտօնական այցելութեանց առթիւ արտասանելի բանախօսութիւնք պէտք է հիմնեալ լինին անկեղծութեան վրայ և ոչ թէ այնպիսի պայմանաց վրայ , որ բուն ազգային զգացումը չեն բացատրեր , և զորս սքօղելու մէջ չենք գիտեր ինչ նկատում կայ , նկատում , որ Ազգային Վարչութեան Պետը մոլորելու միայն կը ծառայէ :

Այդ կարգի բանախօսութիւնք եթէ գերծ լինին անկեղծութեան պայմանէ , Ս. Պատրիարքն— ո՛վ ոք և լինի—

շատ սխալ գաղափար մը կը կազմէ նկատմամբ ազգային զգացմանց , ոյր թարգման հանդիսացաւ մեր Քաղ. Ժողովը , և ն. Ամենապատուութիւն այժմ անշուշտ չկրնար վերահասու չլինիլ թէ ինչ են անմեղ բաղձանքն ու պիտոյք ընդհանուր Ազգին :

Այն անձինք որ պաշտօն ունին յանուն Ազգին խօսելու , պարտին նախ իրենք հաւատարմութիւն տուած լինել անկեղծութեան և ուղղամտութեան , որ ընդհանուրի վստահութեան արժանի հանդիսանալու միակ պայմաններ են :

Այդ փափագելի անկեղծութեան փորձեր քանիցս տուած է մեր Ազգ. Ժողովոյ համակրելի Ատենապետն՝ Ազնուա. Տօքթ. Թիրեաքեան էֆէնտի . իսկ այս անգամ ալ , Ս. Մննդեան Տօնի պաշտօնական այցելութեան առթիւ , մեր վստահելի ու յարգելի Քաղ. Ժողովը տուաւ իւր Ատենապետին՝ Ազնուա. Սահակ էֆէնտի Ղազարոսեանի արտասանած գնահատելի բանախօսութեամբը , որ ինչպէս ըսինք մեր նախորդ թուով ք ճշմարտապէս և անկեղծօրէն կը բացատրէր Ազգին իղձերն ու պէտքերը , զորս անշուշտ ըմբռնած է Ամեն Ս. Պատրիարք Հայրն :

Այս առթիւ կը փութանք խորին գոհունակութեամբ յայտնել թէ՛ մեր արդի Քաղ. Ժողովը սկսած է իւր տեսութեանց և նկատողութեան նիւթ ընել ներքին գործոց բարւոքման , յոյժ կենսական խնդիրն , որ օրուան բուն խնդիրն է :

Կարժէ ուրեմն աջակցիլ մի այսպիսի համակրելի Քաղ. Ժողովոյ , որ չգոհանար միայն ընթացիկ գործոց կարգադրութեամբն , ալ կը փափագի գոհացում տալ ազգային ճշմարիտ ըզձից և կենսական պիտոյից , ինչպէս և մեր ազգային Պատրիարքարանի բարեկարգութեամբը , որ շատ զգալի է :

Ամենայն յաջողութիւն կը մաղթենք ի սրտէ :

Ա.ՁԳ.Ա.ՅԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ Ի ՆՊԱՍ ԴՊՐՈՑԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այս ընկերութիւն շատ գործունեայ գեր կը կատարէ Հայ-իգական սեռի կրթութեան գործին մէջ՝ պատրաստելով կարող վարժուհիներ Հա-

յարնակ դաւառաց աղջկանց վարժարաններու համար :

Իւր բարեկարգ վարժարան մանաւանդ ի Պում-գափու փոխադրելի ի վեր այդ բաղձարդին և համակրելի Ընկերութիւն աւելի օգտակար հանդիսացած է , վասն զի այդ բաղձահայ և ընդարձակագոյն թաղի մէջ առ ի չբոյժ բարեկարգ և արդիւնաւոր աղջկանց վարժարանի՝ բազում աղջկունք այլադաւան վարժարաններ կը յաճախէին , իսկ հիմակ յիշեալ մեղուաջան Ընկերութեան վարժարանը կը գիմեն ինքնաբերաբար , որ աւելորդ է ըսել թէ բարերար հաստատութիւն մ'եղած է նաեւ նոյն մեծ թաղի համար :

Արդ , Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնն իւր կարի օգտակար վարժարանով ստուգիւ արժանի է ընդհանուրի քաջալերութեան և խրախուսանաց , և մենք շատ ուրախ ենք որ խումբ մը կարող , բանիբուն և վստահելի ազգայինք գնահատելով սոյն բաղձարդին Ընկերութեան գործը՝ գլուխ կանգնած են կազմաւորելու համար մի Պարահանդէս , որ ընդ բարձր հովանաւորութեամբ Պարսկական Դեսպան Վսեմ Մոհսին խանի տեղի պիտի ունենայ ամսոյս 23ին ի նպաստ նոյն Ընկերութեան :

Այս առթիւ կոչում կ'ընենք ամեն կարգի ազգայնոց ազգասիրական և կրթասիրական զգացմանցը՝ ջերմապէս հրաւիրելով զիրենք որպէս զի բարեհաճին սիրայօժար ընդունիլ զայն տոմս , զոր Պատ. Կարգադիր Յանձնախումբը կը զրկէ իրենց :

Չմասնակցիլ մի այսպիսի ազնիւ և վսեմ գործի , ոյր հանրօգուտ նպատակը բացատրեցինք , ստուգիւ պատուաբեր չէ , և մենք բնաւ չենք կարծեր գտնուին ազգայինք , որ խորհին մերժել տոմսակ մը , որոյ արդիւնքն յատկացեալ է Հայարնակ դաւառաց մէջ Հայ-իգական սեռի կրթութեան համար պատրաստելու բուն կենսական գործիքն , այն է , վարժուհի , որ զնպատակն իրականացնող փրկադորժ միջոցն է , և շարունակելու համար զայն վարժարան ի նոյն ընդարձակ թաղ , որ շրջապատեալ է գծազգաբար հասարակ դպրոցներով , մինչդեռ յիշեալ մեղուա-

(1) Տեղեկութիւն ունինք թէ պաշտօնական այցելութեանց առթիւ բաւական անձինք կերթան ի Պատրիարքան . բայց բարապէսք նուէր ստանալու ակնկալութեամբ եկողներն ա՛մ միջապէս կառաջնորդեն Ս. Պատրիարքին անձնական սենեակը , ուր ներկայանալէ յետոյ անմիջապէս կը մեկնին , որով պաշտօնական ընդունելութիւնք կը կատարուին անշուք կերպով :

ջան ընկերութեան վարժարան նոյն թաղի մէջ հոգեղերծ խարխոխ մ'է եղած :

Ահաւասիկ բարեպատեհ առիթը նպաստելու և քաջալերելու համար լուրջ և համակրելի ձեռնարկութիւն մը , որ յատկացեալ է կրթութեան փրկարար գործին :

Երբ կը գանդատինք առ հասարակ և զայրոյթ ու նողկանք կ'ըզանք նկատմամբ այնանարգ ոտնձգութեանց՝ զորս օտարք ի գործ կը զնեն Գրիտտոնեայ Հայուն հագին քրիէլու համար , մեզ անկ է ձեռք առնուլ այնպիսի գերազանց միջոցներ , որ կարող լինին փշրելու և խորտակելու օտարաց մեքենայութիւնները և չեզոքացնելու նոցա ջանքերը :

Աւելորդ է ըսել թէ այդ գերազանց միջոցներէ մին է ի Հայաբնակ գաւառս տարածելու ազգային խընամեալ կրթութիւն , յորում առաջնակարգ դեր կը կատարեն Դպրոցասէր Տիկնանց և Սրբանուէր Հայուհեաց Ընկերութիւնք , զորս իւրեանց հանրօրուտ ձեռնարկին մէջ քաջալերելն ա մեն կարգի ազգայնոց սեպուհ պարտաւորութիւնը պէտք է լինի :

Յառաջիկայ թուով կը հրատարակենք լիշեալ բարենպատակ Պարահանդիսի Կարգադիր Յանձնախմբի աշխիւ անդամոց անունները :

ԴԱՐՁԵԱԼ ՄԱՅՐ-ԵԿԵՂԵՑԻ

Շատեր զարմանօք կը հարցնեն պատճառը մեր այն լուրթեան , զոր կը պահենք Պատրիարքարանի բարապանապետ Գալուստ աղայի յուղարկաւորութեան առթիւ Մայր-եկեղեցւոյ քահանայական դասուն այն յոյժ տհաճելի արարքին նկատմամբ , որ դադարի ծածկոց , դադարակրաց զգեստ և այլ պէտքերը տալու համար դրամը կանխիկ պահանջած է :

Անակնունելի չէ թէ այս պարագայ բուռն զայրոյթ պատճառէր , վասն զի վերջապէս ծայրը Սիմոնականութեան կը յանգի , բայց մենք այս կարգի անհաճոյ դէպքերու համար քանիցս գրած , որոց որ անկ է ուշադրութիւնն հրաւիրած և Մայր-եկեղեցւոյ ու նորա վարժարանի իրական պայծառութեան և ճշմարիտ յա-

ռաջգիւմութեան մասին պէտք եղած ազգու միջոցները նշանակած ենք , սակայն ցաւալի է ըսել թէ՛ յայն քար-քարայ յանապարի մնացած և հետեւաբար գործիչք նմանօրինակ զեղծմանց մէջ քաջալերուած են :

Այս դէպք , որ այնքան բուռն զայրոյթ պատճառած է , նախորդներու մէկ կրկնութիւնն է :

Մեր համոզումն այն էթէ Մայր-եկեղեցի և իւր համանուն վարժարան այժմ պարզապէս մարդ ապրեցնելու ապաստանարան դարձած են , զորս սակայն փրկելու , բարեկարգելու և արգիւնաւորելու միջոցը մենք արդէն նշանակած ըլլալով՝ աւելցնելիք նոր բան մը չունինք :

ՉՄԻԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Տեղւոյն մեր Պատ. Թղթակիցը կատարեալ գոհունակութիւն կը յայտնէ նկատմամբ Գաւառ. Ժողովոյ , վարչութեան և Ուսումն. Տնտես. Խորհրդոց փութաջան գործունէութեան և խոհականութեան , որով ազգային գործերը բարւոք վիճակ ստացած են :

Նոյնպէս , երախտագիտութեամբ կը յիշէ թէ իւրեանց ողորմասիրութեամբ հանրածանօթ Ազնուա. Եսայեան եղբարք ինչպէս ամեն տարի , նաեւ այս անգամ Ս. Ծննդեան տօնի առթիւ բարեհաճեր են 50 ազգատիկ ուսանողաց մէյմէկ ձեռք զգեստ շինել :—Շատ ապրին այսպիսիք :

ՊԵՏՐՈՍ ԷՅՑ. ՓԱՓԱՉԵԱՆ

Դրած էինք սակէ առաջ թէ Ա. պահօլութեան Մնտուկի Դեր-արկղակալ Ազնուա. Պետրոս էֆ. Փափաղեան անպարտ արձակեցաւ նաև վերաքննելի ատենի միաձայն որոշմամբ և իւր դատ , ըստ արդարութեան , շահեցաւ :

Պետրոս էֆէնտի , Նախարարական որոշմամբ իւր սլաշտօնի գլուխն անցած է իբր տասն օրէ ի վեր , և այս բան անշուշտ մեծ գոհութիւն պատճառած է իւր րազմաթիւ բարեկամաց :

Այս առթիւ մենք եւս կը փութանք յայտնել մեր ջերմ խնդակցութիւնը :

ԲԺՇԿԻ ՄԸ ԽՐՈՏՐ
ԻՆՖԼՈՒԷՆՑԱՅԻ ԱՌԹԻԻ

Մարմինը տաք պահել և ի հարկին մուշտակ գործածել :

Մենդարար կերակուրներ գործածել , որովհետեւ Ինֆլուէնցան տկար կազմուածքի ենթարկեալներուն միակ թշնամին է , և լաւ սնունդը կրնայ ռօրացնել մարմինը :

Օգտակար է ճաշէն անմիջապէս վերջ , փոքրիկ գաւաթ մը օղի առնուլ և ծարաւ եղած ժամանակնիս չափազանց ջուր չը խմել :

Աւելի փողոցին մէջ ծխել քան տանը մէջ , այսպէս արտաքին ցուրտ օդը փարատած կը լինինք սիկառին ծուխովս :

Վերջապէս , լաւագոյն միջոցն պէտք չէ վախնալ , որովհետեւ վախնալու հարկ չկայ :

Աւասիկ փոքրիկ պատմութիւն մը : Գիւղացի մը ձիով անտառէ մ'անցած ժամանակ , կը հանդիպի պառաւկնոջ մը : Պառաւը կը խնդրէ որ զինք ձիուն ետեւը առնու :

—Ո՛վ ես , կը հարցնէ գիւղացին :
—Ժանտախտն եմ , կը պատասխանէ պառաւը :

Գիւղացին , ահաբեկ , կը խարազանէ անասունը և կսկսի արշաւասոյր ընթանալ :

Պառաւը կը հասնի :

—Ինչո՞ւ կը փախչիս , կը հարցնէ գիւղացւոյն : Կը կարծես թէ առանց քեզ չե՛մ կրնար հասնիլ գիւղը : Քիչ մը ուշ պիտի հասնիմ . . . Խոհեմ եղիր և քովդ ա՛ռ զիս . փոխարէն ո՛չ քեզ և ո՛չ ալ ազգականացդ վնաս կը պատճառեմ :

—Ե՛լ ձիուն վրայ , կըսէ գիւղացին :

Ճամբայ կեննն :

Քսան քայլ հեռանալէն վերջ , գիւղացին կանգ կառնու :

—Եթէ կուզես երջանիկ ընել զիս , կըսէ պառաւին , պէտք է որ այս և այն բարեկամացս չը դպչիս :

—Չեմ դպչիր , կը պատասխանէ պառաւը :

Քսան քայլ ընելէն վերջ , դարձեալ նոյն խնդիրն և նոյն շնորհն : Այնքան կը շարունակուի այս , որ պառաւը կը

խոստանայ տասն անձի միայն զպշիլ զիւղը մտնելէն վերջ:

Նոյն օրը, երեսունի չափ անձինք կ'ենթարկուին հիւանդութեան:

Գիւղացին ժանտախտին քով կը վազէ:

—Վատ մ'ես դո՛ւ, կըսէ նմա, խոստումը չպահեցիր երբէ՛ք. երեսուն մարդ մեռաւ:

—Խոստումս պահեցի, կը պատասխանէ պառաւը, երեսուն մարդ մեռաւ, ճիշդ է այդ, բայց տասը հիւանդութենէն և քսանը վախէն մեռան:

Բարսյական
Մի վախնա՛ք ինՖլուէնցայէն:
(Թարգմ.) Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Աշխարհագրութեան քննութեան ատեն:

Ի՛նչ է նոր ֆայէտոնիան:

—Փրանսական ստացուածք մը յով կէանիա:

—Հող երթալու համար ո՛ւրկէ կանցնին:

—Եղեռնադատ ատենէն:

Նորատի Տօքթ. Ռօպինոն կարի զբաղեալ է:

Շատ դրամ վաստկելու վրայ ես կ'ըսեն նմա:

—Ո՛չ, կը պատասխանէ. հիւանդներէս և ոչ մին կը վճարէ:

—Լաւ, սակայն անոնց ժառանգորդները:

Թիրօլէան պանդոկի մը մէջ:

Սեղանին շուրջը նստած լեռնցիներ օտարականի մը սեղանին քովէն եկող սպասուհւոյն կը հարցունեն՝

Ինչո՞ւ այնքան բարձր կը պոռաս, արդեօք խո՛ւլ է այդ ծերուկը:

—Ո՛չ, Անգղիացի է, գերմաներէն բառ մ'ալ չգիտեր:

Սպասուհւոյ մը պատասխանը՝

Ի՛նչ ըսել է, Ժողէֆին, նպարավաճառիս երթալ դալու համար ժամ մը անցունելուդ խելքս չի հասնիր:

—Տիկին, ճանրան օմնիպիւսէն ջախջախեալ մարդ մը տեսնելով քիչ մը զուարճացայ:

Բժիշկ մը կը կոչուի, որ քննելով հիւանդին վիճակը, ա՛լ լմնցած է կը մրմռայ, ձեռքը արդէն կանանչացեր է:

Բայց ամուսինս, կը պատասխանէ կինը, ներկադործ է:

Բաղդ ունի եղեր. եթէ ներկադործ չըլլար, հինգ վայրկեանէն պիտի մեռնէր:

Գրամօթիտ * * *

Ընտանեաց հայր մը կը դիմէ իր բարեկամներէ միոյն՝ յայտնելով թէ՛

արջիկս պիտի ամուսնացնեմ 20,000 ֆրանգ դրամօթիտով, բայց 10,000 ֆրանգս կը պակսի, կրնա՞ք ինձ փոխ տայ:

Բարեկամը կը պատասխանէ, փոխանակ փոխառութեան դիմելու՝ աւելի լաւ է փեսացուդ համոզես, որպէս զի քիչ մ'ատեն սպասէ:

10,000 ֆրանգին համար ինք արդէն համոզուած է, միայն թէ միւս

10,000 ֆրանգին համար է որ ձեզի կը դիմեմ, վասն զի պատրաստ չունիմ:

ԲԱՂՂՈՒՍԾՔ

ԽՕՍՈՒՆ ԶՈՒՆԸ

«Յայնժամ յորում կը խօսէին կենդանիք» ըսած է առակախօս մը, ինչո՞ւ այժմ չխօսին կենդանիք, քանի որ խօսած են:

Չինդանք այսօր ի դատարան դիմող գինեվաճառի մը այն հաստատական յայտնութեան վրայ թէ՛ ինք լըսած է ուշիմութեան հռչակ հանած շան մը խօսիլը:

Արդէն յայտնի է թէ շունը կըրթութեամբ թուղթ և տոմինօ կը խաղայ և ընդհանրապէս բարթին կը վաստկի, ինչո՞ւ ուրեմն խօսիլ ալ չսուսի:

Ահա այսպիսի բացատրութիւններ կուտար դիւրահաւան գինեվաճառ մը, որուն վրայ կը խնդային սոյն խաբէութեան գառնին ներկայ գանուող ունկնդիրք:

Ուրեմն, կըսէ նախագահը, հաստատապէս կը հաւատա՞ք շան խօսելուն:

Գինեվաճառ.—Բայց, Պ. Նախագահ,

նոյն պահուն խանութս ներկայ գրուանող յաճախորդք ալ հաւատացին:

Նախ.—Թէ ամբաստանելոյն շունը կը խօսէր:

Գինե.—Այո՛, ճիշդ մարդու մը պէս:

Նախ.—Շան հետ խօսակցեցա՞ր (ծիծաղք):

Գինե.—Ո՛հ, ո՛չ, դործը այնչափի չտարի:

Նախ.—Է՛հ, ի՛նչ ըսաւ:

Գինե.—Ահա այս պարոնը (ամբաստանեալը ցուցնելով) իր շանը հետ խանութս մտաւ:

Նախ.—Կը ճանչնայի՞ք զինքը:

Գինե.—Շո՛ւնը:

Նախ.—Ո՛չ, ամբաստանեալը:

Գինե.—Ոչ զինքը և ոչ շունը կը ճանչնայի պարոնը սեղանի մը առջեւ նստաւ, շունն ալ աթոռակի մը վրայ իւր տիրոջ քովը պարոնին քովը գացի հարցնելու համար թէ ի՛նչ կուզէր:

Նոյն պահուն տարօրինակ ձայն մը լինձ ալ կտոր մը միս» ըսաւ: Չորս կողմս նայեցայ հասկնալու համար թէ ո՛ւրկէ կուգար այդ ձայնը. պարոնը շառքին անդին մի՛ նայիր, ձայնը շանս է, ըսաւ:

Ի՛նչ, յարեցի. ձեր շո՛ւնը, ըսի. այո՛, պատասխանեց, ես անոր խօսիլ սորվեցուցած եմ. Երեւակայեցէք թէ ապշած մնացի և կարծեցի թէ վրաս կը խնդար. առաջարկեցի որ նորէն խօսիլ տայ. շատ լաւ, հարցուցէք իրեն թէ ի՛նչ կուզէ, ըսաւ, ես ալ թէպէտ հաւատալս չէր գար, սակայն հետաքրքրութիւնս յագեցնելու համար հարցուցի թէ ի՛նչ կուզէր. որ նորէն կրկնեց թէ՛ կտոր մը միս: Ասոր վրայ բոլորովին ապշեցայ. յաճախորդներս ալ եկան մեր քովը ժողվուեցան և լո՛հ, տեսէք, տեսէք, շունը կը խօսի» կըսէին. ես ալ կեցած տեղս գամուեր մնացեր էի. Յայնժամ պարոնը լինչ կեցեր ես, ուզուածները չսերս առնաւ. վաղեցի բերի և դարեջուրը պարոնին ու միսը շան առջեւ դրի:

Նախ.—Շունը շնորհակալ եմ ըսաւ (ծիծաղք):

Գինե.—Ո՛չ, յափշտակեց միսն կըտորը, և նոյն ատե՛ս յաճախորդներս տարին զիս անկիւն մը և ցած ձայնով խորհուրդ տուին ինձ որպէս զի ծախու առնեմ այդ շունը, որուն պատ-

ճառաւը շատ յաճախորդ կունենամ. մանաւանդ եթէ խօսած շունը վերտառութեամբ խոշոր ազդ մը գնեմ խանութիս ճակատը, այն ատեն խանութս տեղ չմնար և ես ալ ստակ գնելու տեղ չեմ ունենար:

Նախ.—Դուք ալ ծախսու առիք:

Գինե.—Այո՛, պարոն, 400 ֆրանցի, բայց երբ ստակը համբեցի, յայնժամ շունը ա՛հ, զիս այսպէս կը ծախես՝ ալ լա՛ւ, ուրեմն ես ալ բնաւ չպիտի խօսիմ ըսաւ:

Նախ.—Եւ տիրոջը մեկնելէն յետոյ իրա՛ւ ալ եւս չխօսեցաւ:

Գինե.—Բառ մ'անգամ չտրտասանեց, բայց իրիկունը ամեն մարդ վրաս կը խեղար և կ'ըսէին թէ շան տէրը որովայնախօս մ'ըլլալու է ես ալ խառուած ըլլալուս վրայ կրակ կտրած՝ գացի և այս անցքը պատմեցի մեր թաղին ոստիկանապետին, որ խնդայէն մարեցաւ:

Նախ.—Ինչ ըսաւ:

Գինե.—Ըսաւ որ էշ մ'եմ. բայց մէկ քանի օր վերջը մեր պարոնը Մօնմարթըրի տօնավաճառը տեսայ, ուր անպարար եղած էր, զոր անմիջապէս ձերբակալել տուի:

Նախ.—(Առ ամբաստանեալն) Որովայնախօս էք:

Ամբ.—Այո՛, պարոն:

Նախ.—Եւ ձեր շան խօսիլ կարեւորն հաւտացնելով գինեվաճառին՝ խաբեցի՞ք:

Ամբ.—Ինքն ետեւէս ինկաւ ծախու առնելու համար, ես ծախել չէի ուզեր, վասն զի շունն իմ շահուս ազբիւրն էր, բայց գինեվաճառը 200 ֆրանց առաջարկեց, զոր մերժեցի: Ետոյ 300 ֆրանց տուաւ և երբ կը խորհէի վաճառել և ուրիշ մը նորէն գնել, ինք անպարեց 400 ֆրանց տուաւ և գարեջուրին ու մօին համար ալ ստակ չառաւ: Իրաւ որ իրեն այսչափ ետեւէս իյնալուն համար ես ալ ընդունեցայ:

Նախ.—Շունը ի՛նչ եղաւ:

Ամբ.—Եկաւ գտաւ զիս (ծիծաղք), բայց գինեվաճառինն է, եթէ կուզէ . . .

Գինե.—Շնորհակալ եմ, չխօսող շունը ի՛նչ ընեմ:

Նախ.—Դո՛ւն ասոր ետեւէն ինկար ստակդ տալու համար:

Գինե.—Վասն զի յաճախորդներս ըսին ի՛նչ որ եթէ խանութիս ճակատը խօսած շուն ազդը գնեմ, բազում դրամ պիտի շահիմ:

Սոյն պարագայից մէջ դատական ատենը տեւնելով որ խաբէբայութեան ամբաստանութիւնն ըստ բաւականին ապացուցեալ չէ. շան կըրթիչն անպարտ արձակեց, Բարոյական — Չզարմանք եթէ անասունը առաջները կը խօսէին, մինչդեռ կը տեւնենք այսօր ալ անոնցմէ աւելի անասուններ որ կը խօսին:

ԹԱՐԳՄ.

ՓՈՒՆՁ

Կնոջ մը ալպօմին մէջ գրուած.

Սէրը կը նմանի ապուրի, առաջին դգալը շատ տաք է, իսկ վերջինը շատ պաղ:

Այս օրերս ձենովայի մէջ մեռաւ նշանաւոր կին մը, գեղանի, երեք անգամ ամուսնացեալ և երեք անգամ ամուսինը թողած: Այդ եղական կնոջ հետեւեալ տապանագիրը շինած են. «Ողբացեալ իւր հօրմէն, իւր մօրմէն, իւր զաւակներէն և իւր ամուսիններէն»:

1889ի Փարիզու Արուեստահան. դէսը այցելած են հինգ միլիոն գաւառացի և մէկ ու կէս միլիոն օտարական: Այցելուաց ըրած ծախքը մեծ մայրաքաղաքին մէջ կը հասնի 1,250 միլիոն ֆրանքի:

Սթէնլիի մեծամեծ խոստումներ կը լինին իւր հրատարակութեանց և բանախօսութեանց համար: 72,000 ֆրանք տրուած է մեծանուն ճանապարհորդին իւր վերջին ուղեւորական տրպաւորութեանց վրայ խօսելու ձայնագրի միջոցաւ, որոյ համառօտութիւնը պիտի ամփոփուի Թայմը լրագրին մէկ սիւնակին մէջ:

Աշխարհէս ամենէն սուղ գիրքն է Եֆրայիմ Արուեստահանը որ կը գրուի վատիկանու մատենագարանին մէջ: 1512ին Յուլիոս Բ. Պապին տրուած է դրքին ծանրութեան չափ ոս.

կի այդ եղական հատորը գնելու համար, բայց Պապը մերժած է:

Տրէդտայի մէջ ժամագործ մը թուղթէ ժամացոյցներ սկսած է շինել որք իրենց կանոնաւոր ընթացքով անհամեմատ աւելի լաւ կը գործեն քան մեր սովորական մետաղեայ ժամացոյցներն: Կերեւի թէ՛ այդ թուղթը տեսակ մը բազադրութիւն է, որոյ դաղտնիքն գործարանատէրը միայն գիտէ:

Ո՛րչափ հեռաւորութենէ կրնանք որոշել առարկայներն: 100 մէթր հեռաւորութեամբ կարելի է տեսնել մարդուն աչաց զծերն, և դիմաց նըշաններն: 200 մէթր հեռաւորութենէն կրնանք տեսնել ձեռներն, քիթը բերանը, եթէ հեռաւորութիւնը 400 մէթրը լինի, այն ատեն դէմքը սպիտակ կէտ մը կ'երեւի և հազիւ տեսնելի կը լինին ձեռաց և ոտներու շարժումներն: 500 մէթր հեռաւորութենէ մը՝ գլուխը անյայտ կը լինի: 600 մէթր հեռաւորութենէ մը հազիւ կորչուին ոտներու շարժումներն, և 800 մէթր հեռաւորութենէն մարմինն կը տեսնենք իբր տձեւ մտեղէն կոյտ մը:

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՏԱՆԿ ՄՈՒՋԱՔԵՍԵՍԻ

(Իքինճի Մուհաքէմէ)

Էվվէլքի մուհաքէմէտէ, ընկիսի մահքէմէ իլէ ազատան պաղըլարընըն վէ միւտտաիի ումուսինին ինֆլուէնցատան թուլթուլմասընս մէպնի մուհաքէմէ պիլ մէճպուրիյե պաշգա կիւնէ պըրադըլմը իտի: Մուախարէն ընկիսի իլէ միւտտաիի ումուսի խասթալըգտան շիֆաբէղիլ օլմուշ, վէ ազատան խասթալանան իւշ Ջըիլինին պիլիսի էյիլէշէրէք, տիկէր իքիսի հէնուղ եաթագտա պուլունմաղլա, պուլնպուլըն եէրինէ ալէլ ուսուլ տիկէր պիլ մահքէմէտէն իքի ազա թային իտիլմիշ օլտըղընտան, էվվէլքի կիւն ինֆլուէնցանըն իքինճի տէֆ ինճրաի մուհաքէմէսինէ իպթիտար օլունտը:

Մուհաքէմէ էինէ ալաֆրանկա սապահըն թամ սաաթ օն պիլինտէ պաշ-

լայաճող իտի . պու տէֆա մուհաքե-
մէյի սէյրէ կէլէնէրէ Էվլէլէրի տէֆա-
տան պիր գաչ գաթ զիյառէ օլտըզըն-
տան . մահաքէմէ սալօնը վէ տըչարքի
տիվանխանէ տօլտուգտան ֆալլա ,
միւթթէհիմ նագըլընա մախսուս արա-
պա իլէ մահաքէմէյէ կէթիլիլէճէք օլան
ինֆլուէնցայը կէօրմէք իւզրէ տէ ,
պիլիլէրճէ խալլա առլիլէ տախիտիսինն
էօնիւնտէ ինթիմա իթմիլի , իտի :

Ազգադատան պիր արապա կէօրիւ-
նիւր կէօրիւնմէզ « շիթէ Կնֆլուէնցա
կէլիյօր . » տէյու խալլա լավաղէլէրի
գուլաղլարը սաղըր իտէճէք ըստտէ-
տէ իտի . պու գարգաչարը արասըն-
տա շամուրա տիւշէնէրին , շապգասը
այաղլար ալթընտա գալանարըն , պիր
ատըմ տահա էօնտէ պուլընմագ իւզ-
րէ Էէքտիկէրիլլէ միւնագաա իտէնլէ-
րին հատտ ու հիսապը օլմայըպ , հաթ-
թա ճիվարտաքի բօլիս մէրքէզի պու
զալապալըք արասընտա վուգու պու-
լան գալկալարա տախր օ կիւն օթուզ-
տան զիյատէ ժուրնալ Էաղմըչ տըր :

Սաաթ օն պուչըգտա սէյրճիլէրին
տուխուլինէ մախսուս օլան գաբուլար
աչըլըպ , հէր քէս Էէրլի Էէրինէ վէ
զապթը մուհաքէմէյէ մէմուր օլան Մա-
քէն զաղէթասը մուհարրիլի տախի
մէվգըրի մախսուսընա Էէրլէչտիլի մի-
սիլլի , օն տագըգա ոօնրա պու ինֆ-
լուէնցա՝ ժանտարմալարըն թահթը
նագարէթինտէ օլտըզը հայտէ կէթի-
րիլէրէք , միւթթէհիմէրէ մախսուս
պուլընան մէվգըլա օթուրթտըրըլտը :

Անճագ , ինֆլուէնցա պու տէֆա
Էվլէլէրի կիպի սիյահ հինտլի գըլա-
ֆէթիմտէ օլմայըպ , էն շիք բարիսի-
լէր կիպի կիլինմիշ , սաղ կէօղիւնէ պիր
տէ ալթուն կէօղիւնք թագմըչ ըտը :
Էլինտէ պիր տէ քիթապ պուլուսուլօր
տու բի , մուախխարէն անլաչըլտըզընա
կէօրէ Պրանսանըն ճէզա գանուսնա-
մէսի իմիշ :

Թամ սաաթ օն պիրտէ հէյէթի
մահքէմէ սալօնա չըգարապ , մահքէ-
մէնին աչըլտըզընը իլան իլլէտի : Ա-
զատան իքի քիլինին հէնուզ խաաթթա
պուլընմասը վէ անլէրին Էէրլինէ տի-
կէր իքի աղա ճէլպ իտիլմիշ օլմասը
իւզէրինէ , պուլարըն պիրինճի մու-
հաքէմէյէ վէ էսասը մատտէյէ վագըլֆ
օլմայարը զըմնրնտա Էվլէլէրի գապթ-
նամէնին գրաաթընա լիւզուլմ կէօրիւն :

տիւլիւնտէն , պու պապտէ ըէիս թա-
րաֆընտան զապթ քեաթիպինէ էմը
վէրիլտի , վէ անըն թարաֆընտան
տախի զապթ վարագասը օգուստու :

Պատէհու ըէիս միւտտախի ումու-
միլէ խիթապէն

— Ղա լիպա կէլէնքի մուհաքէմէտէ
խտտիանըզըն թէմամէն տէրմիյանընա
վագթ պուլամատընը :

Ինֆլուէնցանըն Ավօգաթը—Միւտ-
տախի ումու մի թարաֆընտան իֆա-
տէյէ պաչլանմագտան Էվլէլէլ , լէհիմիլ-
տէ օլան շահիտէր իսթիմա օլուսմալը
տըր . հէրիֆլէր ուզապ Էօլտան կէլի-
յօրլար . միւվէքքիլիմին պու պապտէ-
քի հուգուգը մուհաֆագա իտիլսին ,
ըէիս Էֆէնտի հազրէթլէրի :

Բէիս—Շահիտէր պուրատա՞ մը .
Ավօգաթ—Էվլէլէթ , Էֆէնտիմ , պու-

րատա տըրլար : Գէնտիլէրինի մահքէ-
մէյէ թագտիմ իթմէյէ մէգպուրմ :
Բուսիալը Էճգաճը Մ . Պոլտինֆ ,
Պէլլիս թագիպլէրինտէն Մ . Նարպուր-
կէն , Մ . Թարրիլթըն , Տէրի սաատէթ
հէրիմէրինտէն Մ . Պոնտինատիւսապու-
լինիս()

Միւտ ում — Էճգաճըլարը հէ-
քիմլէրին ինֆլուէնցա լէհիւնտէ վուգու
պուլաճագ շահատէթլէրի գանուսէն
մագպուլ օլմագ : Էճգաճըլար իլէ հէ-
քիմլէր անըն Էիւզիւնտէն բարա գա-
զանտըզլարը ճիհէթլէ , Էլպէթթէքի
քէնտիսինն լէհիւնտէ պուլուսուլար ,
անա սահապէթ իտէրլէր :

Ինֆ . Ավօգաթը .— Պիր քիմսէնին
լէհիւնտէ վուգու պուլան շահատէթ-
լէր՝ հէր նասըլ օլուրուս օլտուս , մագ-
պուլ տըր . միս մաֆիհ , միւտտախի ու-
մուսիլին պու սէօղիւ տէ նաղարը
տըզգաթա ալընսըն :

Բէիս .— Շահիտէրի տիլնէմէյէ մէճ-
պուրըգ : Մ . Պոլտինֆ սի՞ գ մի սինիլ .
Էճգաճը .— Էվլէլէթ , պէն իմ , Էֆէն-
տիմ :

(Տէլաֆ)

Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ո Ի Թ Ի Է

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Հրատարակուեցաւ 1890 Յունվար 15 Ի Թիւրք .
Առ Մապիկի մանկաց . — Գրատարտ աղ-
ջիլը . — Մարդս ոչ ազահ և ոչ շուայլ
պէտք է ըլլայ . — Ազատարար աղջիկ մը .
— Վարդենին և բաղնի . — Երեք բաղ-
ճանքներ . — Թոշնաճանչ . — Ճամբորդու-
թիւն ի հիւսիսային բեւեռ . — Գիտական
զրօսանք . — Օգոյ ճնշականութիւն — Օգ-
տակար զրօսանք — Համառօտ տեղագրու-
թիւն Երուսաղէմի . — Մանուցմունք :



ԳԱՆՏԻԱՆԸՆ ՀԱՆԻՍ ԳՕԳՈՒՂՈՒ ՍԱՊՅԸՆԸ

Մին էլ գատիմ Գանտիստա ալէա սա-
պօն թապը վէ իմալ օլուստուղու ումու-
սուս մալիւմի տիր : Կիրիտին խալլիս զէյ-
թուն Էաղը վէ նաթրօն վէ չօրագ իլէ Էա-
բըլան սապօնլարը ճիւմէ ինտինտէ մագ-
պուլ վէ միւթէպէր իքէն , պուսըլար պիր
գաչ սէնէտէն պէրու Միտիլի , Էարէմիտ ,
Ավալըգ վէ սայիրմահէլլէրտէ թագլիտ
օլուսմագտա վէ ֆիյաթընը Էվլէն տիւ-
շիւրմէք իչիւն սօտա իլէ պիր նէվ թալազ
թօրբաղի վէ պալ մատէնի կիպի ինսանըն
տիլինէ վէ սաչ վէ թէնիլէ զարար կէթի-
րիլ Էճգալար գարըլտըրըլմագտա տըր .
պիւ ճիւմէ մէմալլէքաէ Էլէէվմ սաթըլմագ-
տա օլան սապօնլար Էհալինին սաչարընը
տէօքմէքտէ վէ շամաչըրտա նիհաէթի-
իւչ տէֆա Էըլգամաղլէ շիւրիւթմէքտէ
տիր . պու կիպի թագլիտ ոսպօնլարըն
սաչարը աէօքիւպ սաչ գըրան խաաթէլի-
կի կէթիլտիլի տախի պէտիլի տիր :

Մաարիֆաթը աճիպանէմ իլէ իմալ օ-
լուսան պու « Գօգուլու սապօն » իսէ , վի-
ճուտ վէ տիլլէր իչիւն Փայիտլի օլտու-
ղու կիպի , սաչարըտա ուզատըր վէ գօ-
գուսու օն կիւն գատար շամաչըրտան չըգ-
մագ . սապօնլարըն ֆէնալըղընտան շիմտիլէ
գատար հանըմլարըն սաչարը տէօքիւլմէք-
տէ իքէն , ումումա պիր խըտմէթը միւթ-
թէլիլիլէ օլմագ իւզրէ , կիւղէլ իւլ Էսաղը ,
աթարիեաթ իլէ իմալ օլուսմուշ օլան պու
սապօնա « Սաչ իլաճը » տէնիլէն սու տախի
գարըլտըրըլը օլտուղուստան , սաչարը
տէօքիւլմէքտէն մուհաֆագա իտէպիլիլ :


Գըէլի ճիտիտի սանտըզա տէօրթ
ղուրուչա ֆիրուլթ օլուսուպ . թաչրա-
տան տախի բէլինէն սիրարըչ օլուսուր իսէ ,
սէրիան կէօնտէրիլլըր : Ումումի տէրօղլիթօ
մահալի , Իսթանպօլտա Աամա ալթընտա
7 նօմէրօլու մաղապամ օլտուղու , վէ ար-
զու իտէնլէրին պիր մըգտար ալուպ թէճ-
րիւպէ իլլէմէլէրի իլան օլուսուր :

ԱՐՏՕՆԱՏԻՐ ԵՒ ՏԵՐԻՆ

ԱՆՏՕՆ ՍԱՔԱԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ . ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՄԱՅԻՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՄԱՐՆԵՐՆ ՐՈՒՊԱՍ ՄԱՂԱՋԱՍԱՐԸ



ՊԵՏՐՈՒՄ ԹՈՒՆԵՆԻ ԳԱՐԵՇՄԱՆ
ՍՏԱՄՊՈՒՄ ԳԻՍՏՐՈՒԻ ԳՈՒՄԸ

Պէջիւք ատամլար, գարլար, տէրեգանլար, գըղլար
 վէ չօճուրլար իջիւն հողըր վէ քանարլամա էնձայի քուտա-
 ար, քանէլար, չէմիլէլէր, հարիլէլէր վէ քարիլիլիւմ վէ
 քարիլիլիւմ,
 Հէր օն պէշ կիւտէ մէվիմէ մախոււս հօտար մալլար վիւ-
 րուտ իտէճէք տիր,
 Սաթլարն մալլէլիլն քեաֆֆէսի՛ պիրիճի վէ տայանաղը
 վէ տիւզիլիւն մալլար տըր,
 Մայնր գուգանեաղընքն գախոսի տայմա Կիճի վէ Իճ-
 վիճ ՄԱՂ ԱՍԹՄԱԳի տան իղարէթ պուլունմուշ օլտուղըն.
 պիր պիւտիլիլէր մաղպուրիլըր թէլլիլիլ իտէն քաղպիլիլ
 միւշտէլիլէր կէ օրէճէլիլ տիր,
 Եիւտէ
 ԻՍԳԻՆՏՏԵՐԻՑԻ վէ ԳԱՂԻՐԻ ԻՑԻՑԻ
 Եիւտէ
 Հայտէլիլն պաղալըմ՝ ՄԱՂԻՐԻՑԻ

ԱԳՐԻՊԱՍ ՄԱՂԱՋԱՍԱՐԸ

ՆԵՐԿԱՎԱՃԱՍ ԶԱՆԱՋԱՆ ՏԵՍԱԿԱՆԵՐՈՒ

Պալաթա Մահմուտիլէ փողոց թիւ 48

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին ամեն տեսակ բնօրի ներքիլք գաճաղան
 պիտոյից համար, իւզալի, պարզ, ու այլ և այլ գոյնիլք և գիւնիլք չափաւոր են :
 Իւր քաղմաթիւ յաճախորդք մինչև հիմա խիստ գոճ մնացած են այն վաճա-
 ռատան ապրանքներն : ուտի, տարապիտ չկայ թէ գոճ պիտի ըլլան նաև ամեն
 անոնք, որ գիմեն անդ, և փորձով համոզուին թէ ապրանքներն ստուգիւ յանձ-
 արարելի են :

ՀԱՅ ԹԵԱԿԱՇԱՌԱՏՈՒՆ

ՊԱՆՃԻ ԳՈՒՓՈՒ

ՃԻՂԱՂ ՊԻՑ ԽՆԻՆՆ ՏԱԿԸ

Յիշեալ վաճառատան մէջ կը գտնուին
 ամեն տեսակ խիստ բնօրի և լայն թէլիլ
 մախուրիլիլ քարիլ տրամ Ին Զ խառտա :

Նէ, ճալայի, և Հյանտայի :
 Այլ վաճառատ ուն որ հաստատուի է մի
 քա՛ի տալիլէ հե՛ւէ իւր ուղտութեամբ,
 պատուաւորութեամբ և անխորտակ գոր-
 ծառնութեամբ միմ անուն և համբաւ կը
 վայելէ ատա և թէ՛ գաւառաւ և ու՛ի խիստ
 ապու՛մ յաճախորդներ :
 Վաճառուիլք կը լինին մեծաքանակ և
 թէ փոքրաքանակ պիտիլք չափաւոր են :

— Իրօջ աղջիկը բնականաբար հետը պիտի
 ըրեր իր սենեկապանուհին : Բայց միւսներուն
 համար, ծառայ ունենալու հարկ չկայ : Դուն
 ալ, մըլանդէ՛, պարտէզիդ լաւ խնամք տար :
 մեզ աղուոր բանջարէղէններ և գեղեցիկ պը-
 տուղներ պատրաստէ :

— Բանջարեղէն, պտուղ, ի՞նչ կըսէք,
 նաւապետ, մայիս ամսու մէջ ենք : Բանջարե-
 ղէնք կը բուսնին, բայց դեռ սպասելու է՞ :

— Ինչ և է, ծաղիկներուն ալ խնամք տար :
 վան զի կանայք ծաղիկ շատ կը սիրեն : Դուն
 ալ, նանո՛ն, պէտք է նայիս որ հաւնօցը լաւ
 վիճակի մէջ գտնուի, և հաւերը հաւկիթ ա-
 ծեն :

— Բայց երբ հաւկիթ ածելու միտք չունին,
 կընս՛մ դանոնք հաւկիթ ածելու բռնադատել :

— Անչուչտ ո՛չ, բայց երբ ածեն, պէտք չէ
 որ առնես ու տաք տաք կուլ տաս :

— Ա՛հ, նաւապետ, Լէօնտի-կուան՝ ըսաւ
 ձեզ զայդ :

— Լէօնտի-կուան ինձի բան չըսաւ. ես թէ և
 տեղէս չեմ կրնար շարժիլ, բայց պատուհանէս
 կը տեսնամ անցած դարձածները : Հիմակ, ա-
 մենքնիդ ալ իմացա՛ք տուած հրամաններս,
 իւրաքանչիւր որ թո՛ղ իր բաժինը կատարէ,
 Ծառայք մեկնեցան : Զորս օր յետոյ, Հիւ-

— Ոչ, ալ եղբօրդ խօսքը մի ընէր, մենք
 զատուեցանք իրարմէ :

— Ո՛հ, Աստուած իմ, բայց ինչո՛ւ :

— Վասն զի այ չպիտի կրնանք իրարու հետ
 կենակցիլ, ինչպէս որ դիտես :

— Բայց եղբօրմէս բաժնուի՛լ . . . :

— Ո՛հ, եթէ եղբօրդ հետ մնալն ինձ հե-
 տեւելէ նախապատիւ կը համարես, ատոր
 ըսելիք չունիմ : Բայց, անխե՛ղք աղջիկ, մը-
 տածէ անգամ մը որ ինձ հետեւելով նոր կեանք
 մը պիտի վարես, քու անձիդ տէրը պիտի ըլ-
 լաս, ազատ պիտի ապրիս և բոլոր կամքերդ
 պիտի կատարես :

— Իրա՛ւ, և ո՛ւր պիտի երթանք :

— Պաէդինեի, նաւապետ մօրեղբօրս դղեակն,
 որ շատ ուրախ պիտի ըլլայ մեզ հիւրընկալե-
 լով : Քեզ հոն ձի հեծնալ, մարմնակրթանք և
 զինաչարժութիւն ալ կը սորվեցունեմ : Որսի
 կեղնենք, ձուկ կը բռնենք. վերջապէս, կը
 վարենք անդ այն բարեբաւտիկ և շունդնալից
 կեանքը, զոր կը վարեն էրիկ մարդիկ միշտ :

Յ Ռ Ա Ն Գ Յ Օ Ր Թ Ո Ւ Ա Ջ

Տ Է Ն Ի Ջ Ս Ի Կ Ո Ւ Բ Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէ մասէ ֆրանք 0,250,000

Ինթիեաթ ազչէսի ֆրանք 1,270,000

Մէզքիւր գումարանիա տէնիզ գաղալարնա գարչը վարօրյարտա վէ կէ միլէրտէ եիւքլէնիլէն մալլէրի, վէ քէզալիք բօսլթա իտարէլէրինէ թէսլիմ օլունան միւճէվէրաթ վէ եախօտ պանգնօթ էվրագը զաեթէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր :

Պու ճիհէթլէ մէպալիզի քիւլլիեթէի սիկուրթա իտէպիլմէք իչին իչպու գումարանիա էվրօբատա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումարանիալար յա պիրլէչմիլ տիր : Պունլարն թէքմիլ սերմաեթ վէ իհթիեաթ ազչէսի 100,000,000 ֆրանքը կէչէր :

էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

Հ Ա Մ Պ Ո Ւ Ի Կ Մ Ի Ի Ն Ի Խ Պ Ի Ր Լ Է Շ Մ Ի Շ

Ե Ա Ն Կ Ը Ն Ա Գ Ա Ր Շ Ը Ս Ի Կ Ո Ւ Բ Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը Ա Ր Ը

Սէ մասէ	Ֆրանք 8,000 000
Ինթիեաթ ազչէսի 1888 Յունիսէ գատար	Ֆրանք 4,817,262
Սէնէվի իրաա 1888 Յունիսէ գատար	Ֆրանք 10,069,700

Մէզքիւր գումարանիալար տէրօղիթօյար վէ խանէլէր վէ անլէր իչինստ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զաեթէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ, թէէմիլաթը գապիեթ թահթընսա օլարագ սիկուրթա իտէրլէր :

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գարու, Եօրկիատիս խան Գ Ա Ռ Ն Ի Կ Ա Ս Տ Ո Ւ Ա Շ Մ Ա Տ Ո Ւ Ի Կ

Մալիւմաթ. — Շիւրէթլէրիմիզին Տերիսաաթէթ պանքէրլէրի պուլունան Ներսէսեան Բէտէր վէ Մախտուժու էֆէնտիլէր՝ հիսապր կէօրիւմիւլ, վէ միւտրիեթի ումուլիեթ թարաֆընտան թաստիգ օլունմուլ հէր կիւնա զարար ու զիեանը թագմինէ թէմամիլլէ թալիմաթ ախզ իլլէմիլլէր տիր :

Թ .

Ո Ւ Ղ Ե Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Սէզառինի նամակին պատասխանելէ յետոյ, նաւապետ տը Վապօրսն, իր խոչոր թիկնաթօռին վրայ նստած, և մէկ սրունքը աթօռակի մը վրայ դրած, սեղանին վրայէն ձայնատար փող մը առաւ : Այս փողն իրեն իբր զանգակ կը ծառայէր . անով կը կանչէր Լէօսատի-Կաան և իրեն պէտք եղած մարդիկը :

Փողն հնչեցուց և Լէօնտի-Կաա երեցաւ . նաւապետն ըսաւ .

— Լէօնտի-Կաա, տանս մէջինները վեր զըրկէ :

— Բոլորն ալ, նաւապետ :

— Այո՛, բոլորն ալ, տալիք հրամաններ ունիմ :

— Շուներն ալ զրկե՛մ :

— Ապու՛լ :

— Շուներն ալ տանը մէջէն չե՛ն :

— Աւանակ, շուտ քրէ . ծառայներս վեր զրկէ :

Նաւապետին տանը մէջ կը գտնուէին, Լէօնտի-Կաաէն զատ, բաւական ծեր պարսիզ

պան մը, սորա նանոն անուն աղջիկն, որ տանն և վեց տարու . տխմար, ծոյլ և որկրամուլ գեղջիկուհի մըն էր, և Մառզին անուն երեսուն և վեց տարեկան լեզուանի կին մը, որ տանը կերակուրները կը պատրաստէր :

— Նաւապետ, ահա ձեր ծառայները, ըսաւ Լէօնտի-Կաա գլխակին մարդիկը վեր բերելով : Պատրաստ են ձեր հրամանաց :

— Տղաք, ըսաւ ծերուկ նաւազը, ձեզ հօսկանչեցի իմաց տալու համար թէ քիչ օրէն շատ մարդ պիտի հիւրընկալուի տանս մէջ . քրոջս աղջիկն իր բարեկամուհիներով մեզ այցելուլիսն պիտի տայ :

— Շատ աղէկ, գոչեց խոհարար կինը, կերակուրներու պատրաստութիւն պիտի տեսնուի, այնպէս չէ՛ : Ուրեմն ես ընելիքս դիտեմ :

— Այո՛, Մառզին, կերակուրներու մեծ պատրաստութիւն պիտի տեսնուի . նոր և մանաւանդ համադամ կերակուրներ պէտք է պատրաստել . վասն զի եկողները կին են :

— Ի՛նչ, կին են, բնաւ էրիկ մարդ չկա՞յ :

— Ո՛չ : Նանո՛ն, դուն ալ, սենեակ պատրաստելու խումք պիտի տանիս :

— Միթէ այդ կանայք հետերնին ծառայ չունին :